

ST. Gregory The Illuminator Armenian Apostolic Church

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական Եկեղեցի

Archpriest Fr. Sarkis Petoyan Տ. Սարգիս Ա. Քհնյ. Փեթոյեան

Sunday Bulletin

Կիրակի, Դեկտեմբեր 10, 2017
Սուրբ Պատարագ կ.ա.10:30ին

Sunday, December 10, 2017
Divine Liturgy 10:30 a.m.

Welcome to our visitors! Our family of parishioners joyfully invites you to make St. Gregory parish your spiritual home. Please join us for fellowship in the Yegavian Hall following services today!

2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107 Tel. 626-449-1523 Fax:626-449-7039
E-Mail:stgregoryarmenianchurch@yahoo.com -
www.saintgregoryarmenianchurch.com

ATTENTION

We welcome sponsors for our Sunday Bulletin
You may contact Church Office: 626-449-1523

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորներու պէտք ունինք Կիրակիներու
թերթիկին ծախսերուն համար

FELLOWSHIP HOUR

Families and individuals are encouraged to host the fellowship hour for happy or otherwise solemn occasions. Please contact church office.
Today's fellowship is sponsored by
St. Gregory Choir

Office Hours: Tues. - Sat. 9:00a.m.-4:00p.m.
Visit our Website or Facebook
www.saintgregoryarmenianchurch.com

Եկեղեցւոյ գրասենեակի ժամեր:
Գշ. – Շբ. 9:00 կ.ա. – 4:00 կ.ե.
Այցելեցէք Մեր Կայքէջը Կամ Ֆէյսպուք

Եկեղեցւոյ «Կիրակոս» եւ «Եկաւեան» Սրահները
Տրամադրելի են Ձեր Բոլոր Առիթներուն

St. Gregory Armenian Church Hall Rentals
Yegavian and Geragos Halls are Available for your

- **Weddings** Հարսանիքներ
- **Baptism** Կնունքներ
- **Birthdays** Տարեդարձներ
- **Anniversaries** Հոգեճաշեր
- **Hokejash and any other occasion** Եւայլն

For more information, please call
Vahe Charkhutian 562-715-8730
Մանրամասնութեան համար հեռաձայնել՝
Վահէ Չարխըթեանին՝ **562-715-8730**

St Gregory Armenian Church
Parish Directory

Parish Council	Howard Emirhanian	(909) 596-1010
Ladies Society	Joan Meymarian	(626) 794-6771
Men's Forum	Berj Gourdikian	(626) 355-8780
Friendship Club	Jeannette Kevorkian	(818) 244-7222
A.C.Y.O	Christina Hilalian	(626) 716-4300
A.C.Y.O. V.Chair	Sophia Kedjidjian	(626) 773-2526
Choir Director	Elise Tashjian	(626) 356-9208
Hovsepian School	Office	(626) 578-1343
Hovsepian School	Chair Asbed Tatoulian	(818) 923-1113
Saturday School	Norayr Dadouryan	(626) 683-7211
Sunday School	Marguerite Hougasian	(626) 351-8137
DFM	Dn. Vahe Charkhutian	(562) 715-8730

HUMANITARIAN AID

As part of the Western Diocese campaign for Syrian humanitarian aid, a basket has been placed in the nartex of the sanctuary on the candle table. If you are interested in supporting this cause, you may kindly leave your donation, which will be sent to the Western Diocese along with donations from all other Western Diocese parishes.

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Մասնակցելու համար Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի ընդհանուր Սուրիոյ օգնութեան շարժումին, կողով մը զետեղուած է եկեղեցւոյ գաւիթին մէջ: Անոնք որոնք կը փափաքին օգնել, թող հաճին իրենց նուիրատուութիւնը դնել կողովին մէջ, որ պիտի ղրկուի առաջնորդարան ինչպէս բոլոր միւս ծուխերու նուիրատուութիւնները:

Կարեւոր Ծանուցում

Կը խնդրենք մեր հաւատացեալներէն մինչեւ վերջ մնալ եկեղեցւոյ մէջ՝ Կիրակի օրուան պաշտամունքի ընթացքին, ի յարգանք այն ընտանիքներուն, որոնք հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն: Հոգեհանգիստը միայն խնդրողներուն համար չէ, այլ մեր բոլոր ննջեցեալներուն համար է: Հաճեցէք եկեղեցի մնալ մինչեւ վերջ, ստանալու համար արձակման օրհնութիւնը, համբուրելով Սբ. Աւետարանը:

Հոգեւոր Հովիւ

Important Notice

We kindly request that during services, the faithful remain in church following Holy Communion, as a sign of respect for the families who have requested requiem service for their loved ones. Additionally, we ask that following the final blessing, we all honor the tradition of approaching and reverently kissing the Holy Bible.

Parish Priest

Աւետարան ըստ Ղուկասու (Luke) 14:12-24

«Երանի անոր որ ճաշ պիտի ուտէ Աստուծոյ արքայութեան մէջ»: Եւ Յիսուս ըսաւ անոր. «Մարդ մը ընթրիք տուաւ եւ հրաւիրեց շատեր: Եւ ընթրիքի ժամուն ղրկեց իր ծառան՝ կանչելու հրաւիրեալները թէ՝ եկէք, որովհետեւ ահա ամէն ինչ պատրաստ է: Եւ ամէնքն ալ մէկ առ մէկ սկսան հրաժարիլ:

Առաջինը ըսաւ. «Ագարակ գնեցի, եւ պէտք է որ երթամ տեսնեմ զայն. կ՚աղաչեմ քեզի, հրաժարած համարէ զիս»: Եւ միւսը ըսաւ. «Հինգ լուծ եզ գնեցի. կ՚երթամ զանոնք փորձելու. կ՚աղաչեմ քեզի, հրաժարած համարէ զիս»: Իսկ միւսը ըսաւ. «Կին առած եմ, ատոր համար ալ չեմ կրնար գալ»: Եւ ծառան եկաւ ու իր տիրոջ պատմեց այս բոլորը:

Այն ատեն տանտէրը, բարկանալով, ըսաւ իր ծառային. «Իսկոյն ելիր քաղաքի հրապարակներն ու փողոցները եւ բե՛ր այստեղ մտցուր աղքատները, խեղանդամները, կաղերն ու կոյրերը»: Եւ ծառան ըսաւ. «Տէր, ինչ որ հրամայեցիր՝ կատարուեցաւ եւ տակաւին տեղ կայ»: Եւ Տէրը ըսաւ ծառային. «Ելի՛ր ճամբաներն ու ցանկապատները եւ բոլոր մարդերը այստեղ մտցուր, որպէսզի տունս լեցուի»: Կ՚ըսեմ ձեզի, որ այդ հրաւիրեալներէն ոչ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքէս»:

"Blessed is everyone who will eat bread in the kingdom of God!" But He said to him, "A man once gave a great banquet and invited many. And at the time for the banquet he sent his servant to say to those who had been invited, 'Come, for everything is now ready.' But they all alike began to make excuses. The first said to him, 'I have bought a field, and I must go out and see it. Please have me excused.' And another said, 'I have bought five yoke of oxen, and I go to examine them. Please have me excused.' And another said, 'I have married a wife, and therefore I cannot come.'

So the servant came and reported these things to his master. Then the master of the house became angry and said to his servant, 'Go out quickly to the streets and lanes of the city, and bring in the poor and crippled and blind and lame.' And the servant said, 'Sir, what you commanded has been done, and still there is room.' And the master said to the servant, 'Go out to the highways and hedges and compel people to come in, that my house may be filled. For I tell you, none of those men who were invited shall taste my banquet.'"

II Thessalonians* (Թեսաղ) *1:1-12

We must always give thanks to God for you, brothers and sisters, as is right, because your faith is growing abundantly, and the love of everyone of you for one another is increasing. Therefore we ourselves boast of you among the churches of God for your steadfastness and faith during all your persecutions and the afflictions that you are enduring.

This is evidence of the righteous judgment of God, and is intended to make you worthy of the kingdom of God, for which you are also suffering. For it is indeed just of God to repay with affliction those who afflict you, and to give relief to the afflicted as well as to us, when the Lord Jesus is revealed from heaven with his mighty angels in flaming fire, inflicting vengeance on those who do not know God and on those who do not obey the gospel of our Lord Jesus. These will suffer the punishment of eternal destruction, separated from the presence of the Lord and from the glory of His might, when he comes to be glorified by His saints and to be marveled at on that day among all who have believed, because our testimony to you was believed.

Պօղոս,Սիդուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ մեր Հայր Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Պարտական ենք ամէն ատեն Աստուծմէ շնորհակալ ըլլալ ձեզի համար, եղբայրնե՛ր, ինչպէս որ արժանավայել է. քանի որ ձեր հաւատքը շատ կ՛աճի, եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը կ՛աւելնայ իրարու հանդէպ: Ուստի մենք ալ կը պարծենանք ձեզմով Աստուծոյ եկեղեցիներուն մէջ, ձեր համբերութեան ու հաւատքին համար՝ ձեր բոլոր հալածանքներուն եւ տառապանքներուն մէջ, որոնց կը համդուրժէք: Ասիկա Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցն է՝ որպէսզի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան, որուն համար կը չարչարուիք ալ: Քանի որ Աստուծոյ քով արդարութիւն է տառապանք հատուցանել կրողներուդ՝ անդորրութիւն մեզի հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկինքէն՝ Իր հզօր հրեշտակներով, բոցավառ կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ չեն ճանչնար Աստուած, ու չեն հնազանդիր մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Անոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով՝ վտարուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր ոյժին փառքէն, Երբ Ինք գայ փառաւորուելու Իր սուրբերուն մէջ, ու այդ օրը սքանչացումի առարկայ ըլլալու բոլոր հաւատացեալներուն մէջ որովհետեւ դուք հաւատացիք ձեր մէջ տրուած մեր վկայութեան:

ՏՆՕՐՀՆԷՔ – Տէր Սարգիս շատ մեծ ուրախութեամբ կ՛այցելէ ձեր տուները Սբ. Ծննդեան առիթով տնօրհնէքի համար: Անոնք որոնք կը փափաքին թող բարի ըլլան եկեղեցւոյս գրասենեակը հեռաձայնել ***(626) 449 1523***:

BLESSING OF HOMES- Fr. Sarkis will be more than happy to visit your home on the occasion of Christmas. If you wish a home blessing, please call the Church Office at: (626) 449 1523.

AVAILABLE FOR SPONSORSHIP

If you would enjoy the opportunity of investing in the growth of our parish, please consider sponsoring one of the following items, either in your name or in memory of your loved one:

Stained Glass Window in the Sanctuary	$10,000
Stained Glass Window near steps to Balcony	$5,000
Small Chandelier	$5,000
Narthex Doors (main/inside)	$15,000
One of Two New Side Altars	t.b.d.
Elevator	$25,000
Bell Tower Mural	$100,000

St. Gregory Membership

We would like to thank all new and current members of St. Gregory Armenian Church who have already renewed their membership for 2017. Please be reminded that to vote at the next annual Parish Assembly Meeting in February 2018, your dues of $100 must be paid in the 2017 calendar year. As a member, you will be able to vote and fully participate in the Annual Assembly, hold an elective office within the parish, receive email and be listed in the church membership directory. If you are a parishioner who is not current member, please consider joining and supporting the parish community. Please contact the church office to learn more.

PARISH FELLOWSHIP HOUR

Our Parish Fellowship Hour, which follows Divine Liturgy each week in the Yegavian Hall, is a wonderful opportunity for parishioners to meet, greet and enjoy one another's company. It's truly one of the most important aspects of our community life, and is more than a time to enjoy coffee, tea and refreshments.

We have always relied on parishioners to host the Parish Fellowship Hour, for which we are grateful. In that tradition, we ask that any individual, couple, family or group of families to come forward and pledge their support in hosting Fellowship Hour on either a happy occasion or in memory of a loved one.

We take this opportunity to thank all the volunteers who have hosted the Parish Fellowship Hour thus far, as we encourage others to come forward and do likewise.

To host a Parish Fellowship Hour or learn more about this program, please contact the church office at 626-449-1523, email at stgregoryarmenianchurch@yahoo.com, or call Sevan Sarkisian at 626-808-1460

Requiem - Հոգեհանգիստ

- Requiem service in memory of **Bedros, Azniv, Boghos & Markarid also Avedis & Ojeni Keleshian** is requested by Ara & Madlen Gebechian and son Peter.
- Requiem service in memory of **Azniv Chaderjian** on the occasion of 9th year of her passing and **Yervant Chaderjian, Elise Keoshkerian and all Chaderjian and Keoshkerian** family deceased is requested by Mihran & Kevork Chaderjian, Elise Torossian, grnadchildren Serop Torossian and family and Tania Torossian and family.

- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Պետրոս, Ազնիւ, Պողոս եւ Մարգարիտ Կէպէշեաններու եւ Աւետիս եւ Օժէնի Քէլէշեաններու հոգիներուն համար: Խնդրողներն են՝ Արա եւ Մատլէն Կէպէշեան եւ զաւակը Փիթըր:
- Հոգեհանգստեան պաշտօն կը խնդրուի Ազնիւ Զատրճեանի մահուան 9րդ տարելիցին ինչպէս նաեւ Երուանդ Զատրճեանի, Էլիզ Քօշկէրեանի եւ բոլոր Զատրճեան եւ Քէօշկէրեան ընտանիքներու ննջեցեալներուն հոգիներուն համար: Խնդրողներն են՝ Միհրան եւ Գէորգ Զատրճեան, Էլիզ Թորոսեան, Թոռները՝ Սերոբ Թորոսեան եւ ընտանիք, Թանիա Թորոսեան եւ ընտանիք:

Այսօր Ս. Պատարագի աւարտին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Հայաստանի երկրաշարժի 29րդ տարեդարձի զոհերուն յիշատակին համար:

****

Today after Badarak a special requiem service will be held for the 29th anniversary of Armenia's earthquake victims

Երգչախումբը սիրով կ՛ընդունի նոր անդամներ:
Հետաքրքրուողներէն կը խնդրուի հեռաձայնել
Էլիզ Թաշճեանին՝ Երգչախումբի ղեկավարին
The Choir welcomes new members.
If you are interested, please see Elise Tashjian,
the Choir Director

ANNOUNCEMENT

The Pastor is available to visit our parishioners in the hospital, nursing homes, or conduct Home Blessings, and other sacramental needs and consultations. Please call the church office at 626-449-1523. We would like to increase our outreach to church members who are unable to attend services. Any parishioner who has a concern is welcome to call the pastor or the Parish Council

Կը խնդրուի անջատել ձեր բջիջային
հեռախօսները եկեղեցի մտնելէ առաջ
Please turn off your cell phone
when entering the church.

Հոգեհանգստեան Խնդրանքներ
Հոգեհանգստեան խնդրանքները հաճեցէք ներկայացնել մինչեւ Հինգշաբթի
կէսօր, որպէսզի կարելի ըլլայ յիշել թերթիկին մէջ
Requiem Services
We ask those who wish to have hokehankisd conducted for their loved ones on a given Sunday, to please submit their names by Thursday noon for printing in the Sunday Bulletin

Remember The Church In Your Will

If certain information is omitted, missing or incorrect in this issue, please excuse any occurrences and contact the Church Office, so we may make the correction in the next issue of the Bulletin.

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ
Հայց. Առաքելական Եկեղեցի

Ժամանակացոյց Սուրբ Ծննդեան

Կիրակի, Դեկտեմբեր *24, 2017*
Մոմավառութեան արարողութիւն *6.30-7:15*
կ.ե.
Բոլոր ընտանիքի անդամներուն համար
Հիւրասիրութիւն՝ յետ արարողութեան *7:15* կ.ե.

Ուրբաթ, Յունուար *5, 2018*
ՃՐԱԳԱԼՈՅՑ
Ժամերգութիւն եւ Ս. Գրոց Ընթերցում *5.30* կ.ե.
Ս. Պատարագ եւ Նախատօնակ *6.00*կ.ե.

Շաբաթ, Յունուար *6, 2018*
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
Ս. Պատարագ եւ ՋՐՕՐՀՆԷՔ *10.30* կ.ա.

Այս օրերուն Հոգեհանգիստ չի կատարուիր

UPCOMING EVENTS AT
ST. GREGORY ARMENIAN CHURCH, PASADENA

- **Wednesday-December 13, 2017** – Ladies' Society Luncheon.
- **Sunday–December 24, 2017** - Christmas Eve Candlelight Service, pageant and reception.
- **Monday–January 1, 2018** - New Years Day Rose Parade float viewing and breakfast.
- **Wednesday–January 10, 2017** - Friendship Club Luncheon.
- **Friday–February 4, 2018** - Super Bowl Party.
- **Friday–February 9, 2018** - Family First Friday, Family Valentine's Celebration.
- **Sunday-March 11, 2018** – Fr. Sarkis' 20th Anniversary Of Ordination celebration
- **Saturday–April 28, 2018** - 10th Anniversary Sanctuary Consecration celebration banquet.

WE WELCOME ALL VOLUNTEERS FOR THE ABOVE EVENTS, PLEASE CONTACT
DN. VAHE CHARKHUTIAN (562) 715-8730

Ս. Ծննդեան Նուէրներու Հաւաք:

Ինչպէս նախորդ տարիներուն այս տարի եւս մեր եկեղեցին կը մասնակցի Ս. Ծննդեան Նուէրներու Հաւաքին, համայնքին կարիքաւոր երեխաներուն համար: Ձեզմէ կը խնդրուի նուիրել Նոր եւ Չփաթթուած խաղալիքներ, որ կրնաք բերել շաբաթուան ընթացքին ինչպէս նաեւ կիրակի օրերը Ս. Պատարագի ընթացքին մինչեւ Դեկտեմբեր 13, 2017

Christmas Toy Drive:

This year, as in previous years, our church is participating in the annual Christmas Toy Drive sponsored by PAPAC. You are welcomed to bring your New unwrapped gift toys any day during the week or on Sunday during the Holy Badarak until Dec. 13, 2017 .

St. Gregory Illuminator
Armenian Apostolic Church

Sunday, December 24, 2017

Christmas Eve	6:30-7:15 p.m.
Candlelight Service & Pageant	
For the Entire Family	
Reception	7:15 p.m.

Friday, January 5, 2018

Eve of Holy Nativity & Theophany	
Evening Service and Reading of Scriptures	5:30 p.m. Divine
Liturgy	6:00 p.m.

Saturday January 6, 2018

Feast of Nativity & Theophany	
Divine Liturgy & Blessing of the Water	10:30 a.m.

s

ST. GREGORY the ILLUMINATOR

ARMENIAN APOSTOLIC CHURCH, PASADENA

Sponsorship Opportunities

We invite all our parishioners and friends to support our parish's effort towards a successful annual Christmas Eve Candlelight Service & reception

The following opportunities for the reception are available for your sponsorship:

Lavash Sandwich Rolls	$250.00
Fried Eggplant	$250.00
Tabuleh	$350.00
Potato Salad	$250.00
Boreg	$250.00
Sarma	$250.00
Chikufteh	$350.00
Meechgor Kofteh	$350.00
Dessert	$300.00
Drinks	$100.00
Table Cloths & Miscellaneous	$150.00
Entertainment	$250.00

The above event is free of charge. All are invited.

For your donations, please call;

Alice 818-606-6606 Vahe 562-715-8730

Vera (church office)626-449-1523



St. Gregory Illuminator Armenian Apostolic Church of Pasadena

Armenian Saturday School

Opens its doors for 2017-18 academic year
Every Saturday from 10-11:30 am

- ✓ **For ages 5-13.**
- ✓ **All levels of Armenian.**
- ✓ **Rigorous, curriculum guided teaching.**
- ✓ **Special emphasis on Armenian culture, history, church, music.**
- ✓ **Annual poetry competitions and art competitions.**

Please inquire for adult classes in all levels.

For more info please contact Mr. Norayr Daduryan
Ndaduryan@agbumhs.org
(626) 683 7211

St. Gregory Sunday School

Every Sunday Morning 11:00a.m. 12:30p.m.
Ages 4 - High School Are Welcome
Register every Sunday 10:45a.m. Dunaians Hall
For information call Marguerite Hougasian (626) 351-8137

“Train up a child in the way he should go
And when he is old, he will not depart from it.”
Proverbs 22:6

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Կիրակնօրեայ Վարժարան
Ամէն Կիրակի Առաւօտեան **11:00 - 12:30**
Տունայեանց սրահին մէջ
Արձանագրութիւն ամէն Կիրակի ժամը **10:45**-ին
Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել
Մարկրիթ Ղուկասեանին՝ **(626) 351-8137**

«Կրթէ՛ մանուկը իր ճամբան սկսած ատենը,
որպէս զի իր ծերութեան ատենն ալ անկէ չխոտորի»
Առակաց **22:6**

The Private Prayer of the Celebrant:
(Which is expressed during the Great Entrance of the Chalice)

None of us who are bound by carnal passions and desires is worthy to approach your table or to minister to Your royal glory; for to serve You is great and fearful even to the heavenly hosts. Yet, through your immeasurable goodness, You, Infinite Word of the Father, did become man and did appear as our high-priest; and, as Lord of all, did commit to us the ministry of this priesthood and this bloodless sacrifice.

For You are our Lord God, who rules over those who are of heaven and those of earth; who sit upon the cherubic throne, Lord of the Seraphim and King of Israel, who alone is holy and live in the saints. I beseech You, who alone are good and ready to hear, look upon me, your sinful and unprofitable servant, and cleanse my soul and my mind from all the defilements of the evil one; and by the power of Your Holy Spirit, enable me, who have been clothed with the grace of this priesthood, to stand before this holy table and to consecrate your spotless body and your precious blood.

Bowing down my neck to You, I entreat You; turn not Your face from me and reject me not from among Your servants; but make me, Your servant, worthy (sinful and unworthy as I am) to offer these gifts to you. For You offer and You Yourself are offered and You receive and You give, O Christ our God and we give glory to You, together with Your eternal Father and the most holy and beneficent Spirit, now and always and unto the ages of ages. Amen.

MISSION STATEMENT OF ST. GREGORY ARMENIAN CHURCH OF PASADENA

The parish of St. Gregory Armenian Apostolic Orthodox Church is a fellowship of Christians committed to practicing the Orthodox Christian Faith through:

1. Sanctifying the life of the faithful
2. Proclaiming the truth of Christ through worship
3. Increasing the number of faithful through outreach and evangelism
4. Service
5. A common life in Christ as expressed in the distinctive faith-experience, sacraments and heritage of the Apostles and of the Church Fathers.

OUR PARISH GOALS:

Worship – *Love the Lord God with all your heart, soul & mind.* (Mt. 22:37)
Ministry – *Love your neighbor as yourself* (Mt. 22:39)
Evangelism – *Go…make disciples* (Mt. 28:19)
Fellowship (Edification) – *Baptize them* (Mt. 28:19)
Instruction – *Teach them to obey all that I have commanded* (Mt. 28:20)

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ համայնքը յանձնառու է գործադրելու ուղղափառ հաւատքը Քրիստոնէութեան՝ այսինքն

1.- Զարկ տալ հաւատացեալներու բարեպաշտութեան:
2.- Քարոզել ճշմարտութիւնը Քրիստոսի:
3.- Բազմացնել հաւատացեալներու թիւը՝ ընկերային ծառայութեամբ եւ աւետարանութեամբ:
4.- Ծիսակատարութեամբ:
5.- Ապրիլ կեանքը Քրիստոսի մէջ, այնպէս ինչպէս արտայայտուած է Առաքեալներու եւ Եկեղեցւոյ հայրերու հաւատքի յատկանշական փորձառութեանց, եկեղեցական խորհուրդներուն եւ աւանդութեանց մէջ:

ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ԾՈՒԽԻՆ

Պաշտամունք - «Սիրէ՛ քու Տէր Աստուածդ քու ամբողջ սրտովդ, քու ամբողջ հոգիովդ եւ քու ամբողջ մտքովդ»: (ՄԹ. 22:37)
Քարոզչութիւն - «Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: (ՄԹ.22:39)
Աւետարանութիւն - «Գացէ՛ք... աշակերտ դարձուցէք բոլոր ազգերը»: (ՄԹ. 22:19)
Ընկերակցութեան Կազմութիւն - «Մկրտեցէ՛ք զանոնք Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով: (ՄԹ.28:19)
Հրահանգ - «Սորվեցուցէ՛ք անոնց պահել այն ամէնը, ինչ որ պատուիրեցի ձեզի»:(ՄԹ. 28:20)

Jesus Is The Reason For The Season

The Ladies Society of St. Gregory Armenian Church of Pasadena

Please join us for our Christmas Gala

Wednesday, December 13, 2017
St. Gregory Geragos Hall

11:00 AM - Social Hour, Viewing of Individual Holiday Decorated Luncheon Tables
12:00 Noon - Luncheon

Sponsored by:
Doris Sarkisian, Joan Meymarian, Hilda Murachanian, Bob Apramian, Vicky Kazanjian, Melani Vetrano

A Holiday Musical Treat!

The Brighter Side Singers
Temple City High School

Sponsored by: Marguerite Hougasian

Guaranteed Seating ONLY With Reservations
Jeannette Kevorkian (818) 244-7222
Anahid Bedian (323) 255-4292 **Donation: $30**

Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ
Տիկնանց Միութեան Ճաշ
Ծննդեան Առթիւ
Զորեքշաբթի, Դեկտեմբեր 13, 2017
Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Կիրակոս Սրահին մէջ
Ընկերային ժամ՝ 11-ին – Ճաշ՝ 12-ին – Մուտքի ներէր՝ $30

Պատարագիչի Անձնական Աղօթքները

Ոչ ոք որ կալանուած է մարմնաւոր ախտերով եւ ցանութիւններով՝ արժանի է մօտենալ սեղանիդ կամ սպասաւորել արքունական փառքիդ, որովհետեւ քեզի ծառ այել մեծ է ու ահազդու նոյնիսկ քու երկնաւոր զօրութիւններուդ:

Սակայն, ով Հօր անպարագրելի Խօսքը, քու անսահման բարութեամբդ մարդացար եւ որպէս քահանայապետ հանդիսացար մեզի: Եւ որպէս բոլորիս Տէրը, այս անարիւն զոհին քահանայութիւնը աւանդեցիր մեզի:

Որովհետեւ դուն ես Աստուած մեր Տէրը, որ կը տիրես երկնաւորներու եւ երկրաւորներու վրայ՝ քերովբէական գահի վրայ բազմած. դուն ես միայն սուրբ եւ կը բնակիս սուրբերու մէջ, ով սերովբէներու Տէր եւ թագաւոր Իսրայէլի:

Կ՛աղաչենք քեզի, ով բարերար եւ քաղցրալուր, նայէ ինծի, քու մեղաւոր եւ անպէտ ծառայիդ, եւ մաքրէ հոգիս ու միտքս չարին բոլոր աղտեղութիւններէն, եւ սուրբ Հոգիիդ զօրութեամբ բաւարարէ զիս որ քահանայական շնորհ հագած եմ կենալու սուրբ սեղանիդ առջեւ եւ քահանայագործելու անարատ մարմնոյդ եւ պատուական արիւնիդ խորհուրդը:

Քեզի կը խոնարհեցնեմ գլուխս եւ կը խնդրեմ, մի դարձներ երեսդ ինձմէ եւ մի մերժեր զիս իրբրեւ մին քու ծառաներէդ, այլ արժանի ըրէ զիս, որքան ալ մեղաւոր ու անարժան ըլլամ, քեզի մատուցանելու այս ընծաները:

Որովհետեւ դուն ես որ կը մատուցանես եւ կը մատուցուիս, կ՛ընդունիս եւ կու տաս, ով Քրիստոս մեր Աստուածը: Եւ քեզի, անսկիզբ Հօրդ եւ անմեղասուրբ եւ բարերար սուրբ Հոգիիդ հետ կը մատուցանենք փառք, հիմա եւ միշտ եւ յաւիտեանապէս. ամէն: